

Վ.Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը /8-րդ դասարան/: Ամփոփում:

Նպատակները`

- ✚ ընդհանրացնել և համակարգել աշակերտների գիտելիքները,
- ✚ կրկնել անցած նյութը,
- ✚ որոշել Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» թեմայից աշակերտների գիտելիքների մակարդակը,
- ✚ զարգացնել աշակերտների ինքնուրույն մտածողությունը, երևակայությունը, բանավոր խոսքը,
- ✚ արժեքային համակարգ ձևավորել,

- ձևավորել սոցիալական հմտություններ` համբերատարություն, հանդուրժողականություն, դիմացինի խոսքն ուշադիր լսելու, կարծիքը հարգելու, սեփական տեսանկյունը պաշտպանելու, քննարկումներին մասնակցելու, դիպուկ հարցեր ձևակերպելու, լսարանի առջև ելույթ ունենալու ունակություն:

Անհրաժեշտ պարագաներ` դասագրքեր, գրականության տետրեր, գրատախտակ

Դասի ընթացքը:

1. Տերյանական աշխարհին մոտենալու համար հնչում է մի երգ` «Հրաժեշտի խոսքերից» /երաժշտություն` Ջառա Դանիելի/:

2. Ուսուցիչը ներկայացնում է, թե ինչ է արվելու դասի ընթացքում: Հետո խոսում է Տերյանի գրական ուղու մասին` նշելով, որ թեև շատերն էին հիանում նրա ստեղծագործությամբ, այնուամենայնիվ քննադատներ էլ շատ կային: Վերջիններս անգամ ասում էին` Տերյանի պոեզիայի բառերն են հայերեն, բայց ինքը ոգով հայ բանաստեղծ չէ: Բայց չէ՞ որ հայ մարդն էլ էր սիրում ու թախծում: Ահա որպես իսկական հայ բանաստեղծի հայրենասիրական ապրումների արտահայտություն` Տերյանը գրեց «Երկիր Նաիրի» շարքը: Այն ստեղծվել է 1913-1916 թվականներին:

3.Հայրենիք բառը բացատրության կարիք չունի. յուրաքանչյուր մարդ այն գիտի, որովհետև ծնվում է նրա հետ միասին: Բայց ուզում են, որ դուք հիմա ասեք, թե այդ բառի խորքերում ինչ էք տեսնում, ինչ է հայրենիքն ի վերջո:

/Աշակերտների պատասխանները/:

Մեզնից յուրաքանչյուրը յուրովի է հասկանում «հայրենիք» բառը, բայց միասին մենք մի տարողունակ կերպար ստեղծեցինք: Ընդհանրացնենք ասվածը. հայրենիքը հարազատ վայրերն են, հարազատ մարդիկ, թանկագին հիշողությունները: Սա մեր դասի բնաբանն է:

4. Մի պահ փակե՛ք ձեր աչքերը և մտովի ստեղծե՛ք ձեր հայրենիքի պատկերը: Հիմա գրականության տետրում 1-2 նախադասությամբ գրի՛ առեք ձեր մտքերը: Ինչպիսի՞ն է ձեր հայրենիքը:

/Աշակերտների պատասխանները/:

5. Բանաստեղծը նկարիչ է, նա էլ է նկարում, միայն թե ոչ վրձնով, այլ բառերով: Նա ստեղծում է կյանքի պատկերներ, կերպարներ, բնության երևույթներ, առարկաներ: Նրա գրչի տակ դրանք գեղարվեստական հնչողություն են ստանում, նոր իմաստ, գույն, տրամադրություն, տպավորություններ:

Գրատախտակին գրել

1. գույները, որոնք պատկերանում են «Երկիր Նաիրին» կարդալիս,
2. բառերն ու արտահայտությունները, որոնք կրկնվում են,
3. կազմել նախադասություններ այգ, գուժկան, խուղ, մուժ, աննկուն, բորբ բառերով:
4. քարտեզագրում՝ բանաստեղծության տեսակները. գրել մեկական կարևոր հատկանիշ, օրինակ՝ թվանշան /տրիոլետ՝ 8/: /Բանաստեղծության տեսակների այդ և մյուս հատկանիշները ներկայացնում են դասարանի մյուս աշակերտներից/:

6. Կարդալ այն բանաստեղծությունները, որտեղ կա *Տիրամայր* բառը, հիշվում է աշունը, Հայաստան-Քրիստոս պատկեր կա, լսվում է մոր լացն ու օրորը /ձայնագրություն. Տերյանի 125-ամակին նվիրված հաղորդումից հատված/, կա առձայնույթ և բաղաձայնույթ, մի սոնետ, ճարտասանական հարց:

7. Ստուգել գրատախտակին կատարված աշխատանքը և գնահատել:

8. Գրականության տեսրերում գույգերով աշխատանք: 2 ընթացքում գրել «այո» կամ «ոչ» պատասխան ակնկալող 3 հարց /ուսուցիչը նախօրոք կազմել է այդպիսի հարցաշար/:

9. Յուրաքանչյուր աշակերտ պատասխանում է տասը հարցի և ստանում ճիշտ պատասխաններին համապատասխան գնահատական /կարելի է կազմակերպել խաղ՝ բոլորի մասնակցությամբ/:

1. Բանաստեղծը սիրում է իր կիզված հայրենիքը:
2. Ողիսևսը Իթաքեի թագավորն էր:
3. Տերյանը հավատացած է, որ հայրենիքը կործանված է:
4. Տերյանն առաջինն էր արևելահայ գրականության մեջ, որ բանաստեղծությունները զետեղեց շարքերում:
5. Վեչեսլավ Իվանովը ռուս բանաստեղծ է:
6. Շարքի բանաստեղծություններից երկուսը սոնետներ են:
7. Մի՞թե վերջին պոետն են ես-ը ճարտասական հարց է:
8. Մորը և հայրական տանը նվիրված բանաստեղծություն կա շարքում:
9. Ըստ Տերյանի՝ օտարը նույնպես հասկանում է մեզ:
10. Տերյանը չի հավատում իր երկրի լուսավոր ապագային:
11. Օտարի կողմից չհասկացված լինելու գաղափարը Տերյանն արծարծում է երկու բանաստեղծությունների մեջ:
12. «Մշուշի միջից- տեսիլ դյութական» բանաստեղծությամբ բեկվում է շարքի տրամադրությունը:
13. Բանաստեղծական շարքում յուրաքանչյուր բանաստեղծություն ունի իր որոշակի տեղը:
14. Սոնետ բառն իտալերեն նշանակում է պար:
15. Տրիոլետը 14 տողանի բանաստեղծություն է:
16. Կից հանգավորումը ենթադրում է ասբբ:
17. Հանգավորումը լինում է միայն կից և խաչաձև:
18. Օղակաձև հանգավորման բանաձևն է արբա:
19. Սոնետը կազմված է երկու քառատող, երկու եռատող տներից:

20. Տրիոլետն ունի ընդամենը երկու հանգ:
21. Բանաստեղծության տողավերջում կրկնվող բառերը կոչվում են ռեդիֆ:
22. Գազելն ունի երկտող տներ:
23. Քառյակն ու քառատողը տարբեր հասկացություններ են:
24. Տրիոլետի ոչ մի տողը չի կրկնվում:
25. Սոնետներ գրել են Տերյանը, Չարենց, Մեծարենցը:
26. Սով նշանակում է ծավի, լաջվարդ:
27. Բոթը և գույժը հոմանիշներ են:
28. Կորյուն փոխաբերաբար նշանակում է կտրիճ, քաջ:
29. Մեզ, մուժ, մշուշ, մառախուղ շարքում ավելորդ բառ չկա:
30. Վտարանդի նշանակում է պանդուխտ:
31. Հարյավ նշանակում է վերակենդանանալ:
32. Այգ նշանակում է պարտեզ:
33. Բարի մայր-ը մակդիր է:
34. Բաղաձայնությոնը բաղաձայնների կուտակումն է 1-2 տողում:
35. Իլիկդ խոսում է անուշ. սա համեմատություն է:
36. Համեմատության մեջ անպատճառ առկա են իբրև, որպես, ինչպես, պես, նման բառերը:
37. Հին հոգի՝ համր ու մոլոր արտահայտության մեջ համր ու մոլորը հետադաս որոշիչ է:
38. Ճարտասանական հարցը պատասխան է ակնկալում:
39. Դյութական բառը մակբայ է:
40. Անդուլ նշանակում է անդադար, շարունակ և այլն:

10. Ուսուցիչը հարցեր է առաջադրում.

1. «Երկիր Նաիրի» շարքի թեման և գաղափարը: Թեմայի և գաղափարի տարբերակում:
2. Ո՞վ է շարքի քնարական հերոսը:
3. Ինչո՞ւ է բանաստեղծն իրեն նմանեցնում Ողիսևսին:
4. Բանաստեղծությունները խոհեր են, այնպես չէ՞: Ինչպիսի՞ խոհեր կան:
 Վերադարձ՝ 1 – 7,
 օտարի կողմից չհասկացվածություն՝ 2 – 9,
 մայր, օջախ՝ 7-8,
 խեղճ հայրենիքն անմնացորդ սիրելու՝ 5 -13,
 հայրենիքի անմխիթար պատկեր՝ 2, 3, 4:
5. Բանաստեղծը տխրում է, երբեմն ողբում, թրթռում է նրա հոգին, սիրով հառնում:
 Ինչպիսի՞ տրամադրություն է իշխում «Մի՞թե վերջին պոետն են ես»
 բանաստեղծության մեջ: /Լսել Պ.Հայրիկյանի հեղինակած երգը և քննարկել/:
6. Լալկա՞ն են արդյոք շարքի բանաստեղծությունները:
7. Ինչպե՞ս է ավարտում իր շարքը Տերյանը:
8. Ի՞նչ է նշանակում «նայվածն այնպես հրեղեն ու անարվեստ» արտահայտությունը:
9. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի...» բանաստեղծությունը:
10. Ի՞նչ խորհրդանիշներ կան շարքում՝ Տիրամայր, Քրիստոս, վարդեր, գիշեր, երգեր, Արարատ...
11. Ինչո՞ւ է շարքն անվանել «Երկիր Նաիրի»: Շարքը Տերյանը վերնագրել է «Երկիր Նաիրի»՝ հարություն տալով Հայաստան անվան հնագույն տեղանուններից մեկին՝ ոգեկոչելով առասպելական անցյալը:
12. Ինչո՞ւ է հայրենիքի նկատմամբ սերն արտասովոր:
 1.Տերանն անտարբեր է այն արժեքների նկատմամբ, որոնք սովորաբար հիշվում են հայրենասիրական ստեղծագործություններում, և չի գովերգում դրանք: Այդ արժեքներն անվիճելի են. այստեղ ու այնտեղ կետերի պես երևում են դրանք:

2. Բանաստեղծը սիրում է իր հայրենիքն այնպիսին, ինչպիսին նա կա՝ խեղճ, ընկած, անհպարտ, արյունոտ, խոցված քինոտ դաշույնով, անբախտ և աղետավոր: Սիրում է քնքշորեն, անմնացորդ, վարակիչ սիրով:

Սերը հայրենիքի նկատմամբ սերն է կյանքի նկատմամբ, իսկ կյանք նշանակում է ապրել:

11. Հեշտ չէ բանաստեղծություն գրելը, հեշտ չէ նաև կարդալն ու ընկալելը, այնպես չէ՞: Պետք է այն երկար ուսումնասիրել, բանաստեղծի խոհերին ու զգացումներին ապրումակցել, ամեն բառը հասկանալ:

Սեփական ակրոստիքոսների ընթերցում և գնահատում:


12. Ուսուցչի եզրափակիչ խոսքը: Որտեղի՞ց են գալիս հանճարները: Ժողովրդի ծոցից: Աստծո կամքով մարդիկ ընտրում են այն մեկին, որ պիտի արտահայտի բոլորի հույզերը: Նա ժողովրդի հիշողութամբ է օժտված, նրա իմաստնությամբ: Տերյանի ժողովրդականությունը հող ունի, ամուր հիմք. նա մեր առջև բացում է ոչ միայն մեր հոգին, այլև թափանցում մեր էության մեջ, որքան էլ այն բարդ ու հակասական լինի: Նա մեզ սովորեցնում է տեսնել թերություններն ու սիրել, սթափ աչքով նայել մեզ, մեր ունեցածին և սիրել: Նա իսկական հանճար է:

Ջարմանալի ճակատագիր էր բաժին ընկել նրան: 35 տարվա ընթացքում, որ տրված էր նրան վերուստ, նա մեծ կյանք ապրեց, մի քանի մարդու կյանք, պիտանի եղավ իր հայրենիքին և ժողովրդին, հյուսեց սիրո և պայծառ ու լուսավոր թախծի անկրկնելի երգեր:

Դասի ընթացքում կատարած աշխատանքի գնահատում:

Դասին մասնակցած աշակերտների գնահատում:

Տնային հանձնարարություն՝ լրացնել դիագրամների բուրգը՝ դատարկ վանդակներում գրելով խոհ-ենթաթեմաները և բանաստեղծությունների առաջին տողերը:



Ուսուցիչ՝ Ն.Սադոյան